ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 678-22
ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

քաղ. Երևան

16.11 2022 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Խառատյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«ՈՍՏԱՆ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ -ի (ՀՎՀՀ՝ 01304649) Տնօրեն Կարեն Ապիկյանի
(նշել կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը) (նշել պաշտոնը, անունը, ազգանունը)

մյուս կողմից (այսուհետ՝ շահառու), միասին՝ (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 13-ի N 1355-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) 3.2-րդ կետի հիման վրա հաստատված՝ «2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող կոնյակի սպիրտի 100 հազար (100 տոկոսանոց սպիրտի հաշվարկով) լիտրը գերազանցելուց հետո այլ խմբաքանակների իրացման իրավունքի ձեռք բերման համար տնտեսավարող սուբյեկտի կողմից վճարված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի աղյուսակի 5.1-ին կետի 3-րդ պարբերությամբ սահմանված լրացուցիչ 100 դրամ պետական տուրքի չափով տնտեսավարող սուբյեկտին օժանդակության տրամադրման ընթացակարգը հաստատելու մասին» Էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի փետրվարի 19-ի N 146-Ա հրամանը (այսուհետ՝ հրաման) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով շահառուն հրամանով սահմանված ընթացակարգով և ժամկետներում պետական օժանդակություն ստանալու նպատակով դիմում է Նախարարություն, իսկ Նախարարությունը համապատասխան եզրակացության հիման վրա տրամադրում է որոշման հավելվածի 4-րդ կետի 7-րդ ենթակետի միջոցառմամբ (այսուհետ՝ միջոցառում) սահմանված օժանդակությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. պահանջելու օժանդակության ստացման նպատակով դիմումին կից ներկայացնել Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանքի բնօրինակը և «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող կոնյակի սպիրտի 100 հազար (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) լիտրը գերազանցելուց հետո այլ խմբաքանակ(ներ)ի իրացման իրավունքի ձեռք բերման նպատակով վճարված պետական տուրքի անդորրագր(եր)ի պատճեն(ներ)ը,

2.1.2. օժանդակության ստացման մասին դիմումը հրամանով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել և դիմումատուին պատշաճ կարգով տեղեկացնել 2.4.1-ին կետում նշված ժամկետում անհամապատասխանությունները վերացնելու և նոր դիմում ներկայացնելու մասին:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1. ստուգել շահառուի կողմից ներկայացված դիմումի համապատասխանությունը հրամանով սահմանված ձևաչափին և դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի առկայությունը և իսկությունը,

2.2.2. դիմումը մուտքագրվելու և պայմանագիր կնքվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ստորաբաժանումների եզրակացության հիման վրա, ֆինանսական միջոցների առկայության դեպքում, օժանդակության գումարը փոխանցել շահառուին:

2.3. **Շահառուն** իրավունք ունի՝

2.3.1. օժանդակություն ստանալու նպատակով դիմել միջոցառման գործողության ամբողջ ժամկետի համար,

2.3.2. ստանալ միջոցառմամբ սահմանված չափով օժանդակություն:

2.4. **Շահառուն** պարտավոր է՝

2.4.1. Պետական եկամուտների կոմիտեի տեղեկանքը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Նախարարություն՝ օժանդակության ստացման դիմումին կցելով 2.1.1-ին կետում նշված փաստաթղթերը,

2.4.2. օժանդակության ստացման մասին դիմումը և 2.1.1-ին կետում նշված փաստաթղթերը հրամանով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում շտկել անհամապատասխանությունները և 2.4.1-ին կետում նշված ժամկետում ներկայացնել նոր դիմում:

2.4.3. խստորեն պահպանել միջոցառման և հրամանի պայմանները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի գումարը կազմում է միջոցառման գործողության ամբողջ ժամանակաշրջանում շահառուի կողմից ներկայացված դիմումներում նշված գումարը:

3.2. Օժանդակության գումարը հաստատուն է, և շահառուն իրավունք չունի պահանջելու ավելացնել, իսկ Նախարարությունը նվազեցնել այդ գումարը:

3.3. Օժանդակության տրամադրումն իրականացվում է փուլերով՝ ներկայացված դիմումների հիման վրա, դիմումի ստացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

3.4. Նախարարությունը 3.1-ին կետում նշված օժանդակության գումարները փոխանցում է շահառուի հաշվարկային հաշվին՝ անկանխիկ եղանակով:

3.5. Այն դեպքում, երբ դիմումով ակնկալվող օժանդակության գումարի չափը գերազանցում է Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով օժանդակության տրամադրման համար հատկացված գումարի մնացորդը, ապա տվյալ դիմումի շրջանակներում օժանդակության գումարը տրամադրվում է մասնակի՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով օժանդակության տրամադրման համար հատկացված գումարի մնացորդի չափով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով օժանդակության տրամադրման համար հատկացված գումարի սպառվելը, բայց ոչ ավել քան միջոցառման գործողության ժամկետի ավարտը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերենով, երկու օրինակից և 3. էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՀԱՌՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հասցեն՝ 0010, քաղ. Երևան, Մհեր Մկրտչյան 5 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011036051 ՀՎՀՀ 02698604 ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականություններ կատարող ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ ..... (ստորագրությունը) Կ. Տ.	«ՈՍՏԱՆ ԳԻՆՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ (կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը) Հասցեն ՀՀ, ք.Երևան, Մալաթիա– Սեբաստիա, Իսակովի 83 ՀՎՀՀ. 01304649 Հեռ. 091209048 Հ/Հ1570067658770100 .Ամերիաբանկ ՓԲԸ (Ֆինանսական կառույցի անվանումը) Տնօրեն Կարեն Ապիկյան (Շահառուի ներկայացուցչի պաշտոնը, անունը, ազգանունը) ..... (ստորագրությունը) Կ. Տ.